*ԿԱԼԿԱԹԱՅԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ*

## ՍՐԲՈՑ ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՏՈՆԸ ՀԱՅՈՑ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Հոկտեմբերի 14-ին Կալկաթայի հայոց Մարդասիրական ճեմարանում մեծ շուքով նշվեց Սրբոց Թարգմանչաց տոնը: Աննախադեպ խանդավառություն էր տիրում ճեմարանականների շրջանում, քանզի վերջին տասնամյակում առաջին անգամ էր հավուր պատշաճի նշվում նվիրական այս տոնը: Այն պատգամում էր ճեմարանականներին՝ սիրելու ոսկեղենիկ մեր Մայրենի լեզուն՝ վերջինիս միջոցով ամուր կառչելով մեր երանելի նախնիների աներեր հավատքին՝ հավատարիմ մնալով նրանց թողած հսկայական ժառանգությանն ու ավանդին:

Միջոցառումն սկսվեց միասնական Տերունական աղոթքով, որից հետո ներկաներին դիմեց միջոցառման կազմակերպիչ, ճեմարանի հայոց լեզվի և գրականության ուսուցիչ տիկին Գրետա Անդրեասյանը: Նա անդրադարձավ գրերի գյուտի ստեղծման պատմությանը, Ս. Թարգմանիչների սխրանքին, հայոց լեզվի անաղարտության պահպանման կարևորությանը:

Հանդիսության ժամանակ ճեմարանականները մեջբերեցին հայ և օտար հեղինակների ասույթները հայոց լեզվի մասին՝ Հնդկաստանի հյուրընկալ հողում մեկ անգամ ևս հնչեցնելով քաղցրաբարբառ մեր լեզուն: Հանդիսությունն ընդմիջարկվում էր ճեմարանի երգչախմբի ելույթներով՝ գլխավորությամբ երաժշտության ուսուցիչ Վաչագան Թադևոսյանի:

Հանդիսության ավարտին եզրափակիչ խոսքով հանդես եկավ ճեմարանի կառավարիչ Տ. Օշական վրդ. Գյուլգյուլյանը: Նա շնորհակալություն հայտնեց միջոցառման կազմակերպիչներին՝ ուրախությանբ նշելով, որ 185-ամյա կրթական հաստատության մեջ վերականգնվում են նախկին բարի ավանդույթները:

Հանդիսությանը ներկա էին Կալկաթայի եկեղեցական խորհրդի անդամներ, Շվեդիայից ժամանած նախկին ճեմարանականներ, հնդկահայեր և Մարդասիրական ճեմարանի սաները:

## ԳՐԱԿԱՆ-ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ՝ ՆՎԻՐՎԱԾ ՃԵՄԱՐԱՆԻ 185-ԱՄՅԱԿԻՆ

Նոյեմբերի 9-ին Կալկաթայի հայոց Մարդասիրական ճեմարանում հոբելյանական տոնակատարությունների շրջանակում տեղի ունեցավ հերթական գրական-գեղարվեստական ցերեկույթը, որը կազմակերպել էր ճեմարանի անգլերեն լեզվի երկարամյա ուսուցիչ Բրիտա Ռոյը: Բեմ ելած ամեն մի ճեմարանական փորձում էր յուրովսանն ցույց տալ իր հմտությունները՝ արժանանալով ներկաների ծափողջույններին: